«Գյուղկրեդիտ»
ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

2018թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար

# Անկախ աուդիտորական հաշվետվություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Գուդկրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի
Տնօրենների խորհրդին

## *Կարծիք*

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և համապատասխան ծանոթագրությունը, պատրաստվել են «Գուդկրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի (Կազմակերպություն) 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին` Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով:

Աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր եզրակացությունը ներառում է հանգամանքների շեշտադրում այն մասին, որ ներկայացված համադրելի տվյալները, բացառությամբ աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում նկարագրված ճշգրտումների, հիմնված են Ընկերության 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների տվյալների վրա, որոնց աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2018թ. մայիսի 24-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

## *Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ*

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվող բոլոր բացահայտումները: Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների և վերջիններիս վերաբերյալ մեր հաշվետվության ընթերցումը չի փոխարինում Կազմակերպության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացության ընթերցմանը:

## *Աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացությունը*

Մենք արտահայտել ենք չձևափոխված կարծիք աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ` 2019թ. հունիսի 27-ի մեր աուդիտորական եզրակացությունում:

## *Ղեկավարության պատասխանատվությունն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

### *Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է կարծիք արտահայտել, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ հիմք ընդունելով այն ընթացակարգերը, որոնք իրականացվել են Աուդիտի միջազգային ստանդարտ 810 (խմբագրված) *«Հաշվետվության ներկայացում ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ»* պահանջների համաձայն:

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

KPMG Armenia LLC

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
27 հունիսի 2019թ.

| | 2018թ. հազ. դրամ | 2017թ.* հազ. դրամ |
|---|---|---|
| | | Վերահաշվարկված** |
| Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ | 4,500,166 | 1,612,091 |
| Տոկոսային ծախս | (670,224) | (236,877) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **3,829,942** | **1,375,214** |
| Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս | (6,263) | (3,315) |
| **Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ ծախս** | **(6,263)** | **(3,315)** |
| Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից | 1,242 | (31,282) |
| Այլ գործառնական (ծախսեր)/եկամուտ | (192,840) | 62,982 |
| **Գործառնական եկամուտ** | **3,632,081** | **1,403,599** |
| Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկումից կորուստներ | (2,650,057) | (891,078) |
| Անձնակազմի գծով ծախսեր | (421,833) | (308,850) |
| Այլ ընդհանուր վարչական ծախսեր | (1,388,176) | (707,070) |
| **Վնաս նախքան շահութահարկով հարկումը** | **(827,985)** | **(503,399)** |
| Շահութահարկի գծով հատուցում | 149,540 | 88,317 |
| **Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար** | **(678,445)** | **(415,082)** |

* Կազմակերպությունը սկսել է կիրառել ՖՀՄՍ 9-ը և ՖՀՄՍ 15-ը 2018թ. հունվարի 1-ից: Ստանդարտին անցման ընտրված մեթոդի համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել: ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում Կազմակերպությունը փոխել է որոշ հոդվածների ներկայացումը, համադրելի տեղեկատվությունը համապատասխանաբար վերաներկայացվել է:

** Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի տվյալները վերահաշվարկվել են ղեկավարության կողմից:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2019թ. հունիսի 27-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Արտաշես Տոնոյան
Գործադիր տնօրեն

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» «GOODCREDIT» 00096715

Մարինե Բարբինյան
Գլխավոր հաշվապահ

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:**

| | 31 դեկտեմբերի 2018թ. հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2017թ.* հազ. դրամ | 1 հունվարի 2017թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| | | Վերահաշվարկված** | |
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 145,499 | 205,210 | 45,507 |
| Ժամկետային ավանդներ բանկերում | - | 127,846 | 127,802 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 4,746,990 | 3,138,767 | 1,296,159 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 257,552 | 127,491 | 76,338 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 364,141 | 163,288 | 74,971 |
| Այլ ակտիվներ | 203,010 | 167,719 | 31,054 |
| **Ընդամենը ակտիվներ** | **5,717,192** | **3,930,321** | **1,651,831** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| Վարկեր և փոխառություններ | 5,998,125 | 3,631,704 | 1,228,919 |
| Այլ պարտավորություններ | 754,146 | 450,000 | 159,213 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **6,752,271** | **4,081,704** | **1,388,132** |
| **ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 239,000 | 239,000 | 239,000 |
| Էմիսիոն եկամուտ | 228,583 | 228,583 | 228,583 |
| Գլխավոր պահուստ | 8,167 | 8,167 | 8,167 |
| Լրացուցիչ կապիտալ | 20,938 | 20,938 | 20,938 |
| Կուտակված վնաս | (1,531,767) | (648,071) | (232,989) |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | **(1,035,079)** | **(151,383)** | **263,699** |
| **Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ** | **5,717,192** | **3,930,321** | **1,651,831** |

* Կազմակերպությունը սկսել է կիրառել ՖՀՄՍ 9-ը և ՖՀՄՍ 15-ը 2018թ. հունվարի 1-ից: Ստանդարտին անցման ընտրված մեթոդի համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել: ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում Կազմակերպությունը փոխել է որոշ հոդվածների ներկայացումը, համադրելի տեղեկատվությունը համապատասխանաբար վերաներկայացվել է:

** Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի տվյալները վերահաշվարկվել են ղեկավարության կողմից:

| | 2018թ. հազ. դրամ | 2017թ.* հազ. դրամ |
|---|---|---|
| | | Վերահաշվարկված** |
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | |
| Ստացված տոկոսներ | 3,345,104 | 1,363,218 |
| Վճարված տոկոսներ | (9,942) | (19,453) |
| Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ | - | (3,315) |
| Զուտ (վճարումներ)/մուտքեր արտարժույթով գործառնությունների գծով | (7,032) | (7,490) |
| Այլ ստացված եկամուտ | 171,941 | 62,982 |
| Աշխատակազմի և այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ | (1,588,255) | (851,432) |
| **Գործառնական ակտիվների (աճ)/նվազում** | | |
| Հաճախորդներին տրված վարկեր | (3,702,572) | (2,510,876) |
| Այլ ակտիվներ | (2,778) | (3,452) |
| Ժամկետային ավանդներ բանկերում | 127,846 | (44) |
| **Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)** | | |
| Այլ պարտավորություններ | 83,185 | 49,727 |
| **Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը** | **(1,582,503)** | **(1,920,135)** |
| Վճարված շահութահարկ | - | - |
| **Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ՝** | **(1,582,503)** | **(1,920,135)** |
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (177,039) | (79,943) |
| **Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր** | **(177,039)** | **(79,943)** |
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | |
| Ստացված վարկեր և փոխառություններ | 2,123,030 | 2,186,704 |
| Վարկերի և փոխառությունների մարում | (421,715) | (28,486) |
| **Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր** | **1,701,315** | **2,158,218** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ** | **(58,227)** | **158,140** |
| Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | (1,484) | 1,563 |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ | 205,210 | 45,507 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ** | **145,499** | **205,210** |

* Կազմակերպությունը սկսել է կիրառել ՖՀՄՍ 9-ը և ՖՀՄՍ 15-ը 2018թ. հունվարի 1-ից: Ստանդարտին անցման ընտրված մեթոդի համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել: ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում Կազմակերպությունը փոխել է որոշ հոդվածների ներկայացումը, համադրելի տեղեկատվությունը համապատասխանաբար վերաներկայացվել է:

** Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի տվյալները վերահաշվարկվել են ղեկավարության կողմից:

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

| հազ. դրամ | Բաժնետի-րական կապիտալ | Էմիսիոն եկամուտ | Գլխավոր պահուստ | Լրացուցիչ կապիտալ | Չբաշխված շահույթ / (կուտակված վնաս) | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|---|---|
| **Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ** | 239,000 | 228,583 | 8,167 | 20,938 | (232,989) | 263,699 |
| **Ընդամենը համապարփակ վնաս** | | | | | | |
| Վնաս տարվա համար (վերահաշվարկված) | - | - | - | - | (415,082) | (415,082) |
| **Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար (վերահաշվարկված)** | - | - | - | - | (415,082) | (415,082) |
| **Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերահաշվարկված)** | **239,000** | **228,583** | **8,167** | **20,938** | **(648,071)** | **(151,383)** |
| | | | | | | |
| **Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ* (վերահաշվարկված**)** | 239,000 | 228,583 | 8,167 | 20,938 | (648,071) | (151,383) |
| Ճշգրտում ՖՀՄՍ 9-ի սկզբանական կիրառման ժամանակ` առանց հարկի | - | - | - | - | (205,251) | (205,251) |
| **Վերահաշվարկված մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ** | 239,000 | 228,583 | 8,167 | 20,938 | (853,322) | (356,634) |
| **Ընդամենը համապարփակ վնաս** | | | | | | |
| Վնաս տարվա համար | - | - | - | - | (678,445) | (678,445) |
| **Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար** | - | - | - | - | **(678,445)** | **(678,445)** |
| **Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **239,000** | **228,583** | **8,167** | **20,938** | **(1,531,767)** | **(1,035,079)** |

* Կազմակերպությունը սկսել է կիրառել ՖՀՄՍ 9-ը և ՖՀՄՍ 15-ը 2018թ. հունվարի 1-ից: Ստանդարտին անցման ընտրված մեթոդի համաձայն` համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել: ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում Կազմակերպությունը փոխել է որոշ հոդվածների ներկայացումը, համադրելի տեղեկատվությունը համապատասխանաբար վերաներկայացվել է:

** Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի տվյալները վերահաշվարկվել են ղեկավարության կողմից:

# 1 Պատրաստման հիմունքներ

Այս ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են «Գուդկրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի (Կազմակերպություն) Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ ստորագրված 2019թ. հունիսի 27-ին: Այս ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են միայն ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվությունները, որոնք վերցվել են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների 6-ից 9-րդ էջերից՝ առանց որևէ փոփոխության: Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացված բացահայտումները: Կազմակերպության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները կարող են տրամադրվել ըստ պահանջի Կազմակերպության գրասենյակից (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0069, Կ. Ուլնեցու փ. 58/1):